ՆՈՐ-ԴԱՐ

№ 161 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ_աբաթ, 17 Հոկտեմբերի — 1892 — Հ_աբաթ, 17 Հոկտեմբերի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 161

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գինն 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Տարւայ վերջին քառորդին խմբագրութիւնս խնդրում է նրանց, որոնց վրայ անցեալից ապառիկներ կան՝ մնացած կամ որոնք մի որևէ գումար պարտ են, յիշեն իրենց պարտքը և ուղարկեն խմբագրութեանս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մեր գրութիւնից։—Նոր Նախիջևանի թեմական դպրանոցը։

Քրոնիկոն.—Էջմիածնից։ Բժիշկները մասնաժողով։ Կաթողիկոսի գոյքի յանշատականութեան գործը։ Այս տարւայ զինուորակոչը։ Մանքեր Էջմիածնում։ Գրականական-երաժշտական առաւօտ։ Ռուսական պոստը։ «Արաքս»։ Զինաթաղի ծառայողները։ Հայոց թատրոն։ Երգչութիւն։ Ուշադրից։

Պաշտօնական տեղեկութիւններ խմբագրական մասին։

Արդէն ժամանակն է։

Ի՞նչ. տարեգրքամ ս. Էջմիածնի հոգևոր Հեմարանի։

Նամակներ Մոսկուայից, I—Յուցահանդէսները։

Քաղաքական.— Ֆրանսիայի հանդարտ գաղափարը (վերջ)։ Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։
Հեռագրեր։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 16 հոկտեմբերի 1892 թ.

ՄԵՐ ԴՐՈՒԹԻՒՆԻՑ

Պարբերական մամուլի և հասարակական գրադարանների դրութիւնից կարելի է չափել մի ժողովրդի ազգային կուլտուրայի աստիճանը։

Մեր պարբերական մամուլի դրութիւնն արգէն կարելի է նրանից իմանալ, որ հայոց հասատատութիւններն ու ընկերութիւնները իսկ երէկ փողով յայտարարութիւններ են տալիս, այդ անում են առաջ օտար թերթերին. եթէ հայ քահանաներ անգամ մեռնում են, նրանց մահագուշակը տպւում է օտար թերթերում, թէպետև յայտարարութիւնների բովանդակութիւնը վերաբերում է հայերին միայն, թէպետև մեռնողների բարեկամներն էլ, ծանօթներն էլ միմիայն հայեր լինին։

Ինչ վերաբերում է գրադարաններին, մենք հասարակաց գրադարան չունինք. եթէ կայ, օրինակ, Ներսիսեան դպրանոցում, եթէ կայ Էջմիածնում մի որ և է գրադարանի պէս բան, այդ էլ Աստուած միայն գիտէ թէ ինչ ողորմելի, աղքատ վիճակումն է։

Մի 10—20 տարուց յետոյ, եթէ մեկը կամենայ մեր ժողովրդի կուլտուրայի պատմութիւնը գրել, անշուշտ նա ամենից կարևոր և առատ նիւթը պիտի քաղէ մեծ մասամբ մեր պարբերական մամուլից, որը իւր մէջ ամփոփում է բատ ամենայնի մեր ժողովրդի ընթացիկ կեանքի պատկերն իւր լոյս ու մութ կողմերով։ Բայց հետաքրքիր է իմանալ թէ արդեօք, հայոց ո՛ր գրադարանում պէտք է գտնէ պատմութիւն գրողը մեր պարբերական թերթերի ժողովածուն։

Հաստատած ենք, որ և ո՛չ մի տեղ։

Հայաստանում չկայ ու չկայ մի վանք, որ իբրև ազգային գրադարանի կամ թանգարանի տեղ յայտնի լինէր. Պատում յայտնի չէ մեզ, որ այդպիսի մի բան լինի. Թիֆլիսում հո՛ չկայ, իսկ Էջմիածնում որ ամեն գրքերի, կամ պարբերական միութիւն հրատարակութեան բոլոր օրինակները գտնուէին—տարակուսում ենք։

Կարծում ենք, որ հայոց կեանքի, կուլտուրայի պատմութեան համար նիւթեր ժողովողը դարձեալ պէտք է դիմի եւրոպական գրադարաններին։

Օրինակ «Նոր-Դար»-ի իւրաքանչիւր տարւայ հրատարակութեան օրինակը կազմուած և կարգին կը գտնուի Լոնդոնի Բրիտիշ Մուզէումում անտարակոյս, բայց և ո՛չ մէկ տարւայ օրինակը չենք գըտնիլ Էջմիածնի գրադարանում։

Այս գրութիւնը ցոյց է տալիս թէ մեր ժողովուրդը դեռ որքան յետ է մնացել իւր ազգային կուլտուրայի զարգացման գործի մէջ։

Ինչքա՜ն է։ Աւելս թէ հայերն այդ բանի համար սէր չունին,—սխալ կըլինէր. ասես թէ հայերը փող չեն տալիս հասարակական բարեվարտակ գործերի համար,—դա էլ մեզք կըլինէր։

Ընդհակառակն, այդ կողմից հայերը բաւականին առաջ են գնացել և ունին այնպիսի ընտիր յատկութիւններ, որոնք կարող էին աւելի մեծ ազգերի նախանձը շարժել։

Բանն այն է, որ հայերն իրենց ընտիր յատկութիւնների հետ ունին և խոշոր պակասութիւններ. բանն այն է, որ հայերն ընդհանրապէս կանոնաւոր կրթութիւն չեն ստանում, ազգային, հասարակական բուն դիտակցութեան չեն հասել և իսկապէս իբրև հայ իրենք իրենց չյարգելով, չեն յարգում և այն ամենը, որ հայերէն է, որ հայոց է վերաբերում, որ հայութեան գոյն կամ անուն ունի։

Ձենց դրա համար էլ հայը, չըննայելով իւր ճշմարիտ նախանձելի բարեմասնութիւններին, արհամարելի է դառնում օտարների աչքում, և իրաքանչիւր հայ այդ զգում է, եթէ խոստովանելու էլ չլինի։

Ինչպէս ենք ուզում, որ մեզ ուրիշները յարգեն, եթէ մենք մեզ չենք յարգում. ինչպէս ենք ուզում, որ ուրիշները մեր լեզուն, մեր առանձնայատկութիւնները, մեր ընտանեկան սովորութիւնները... յարգեն, եթէ մենք արհամարում ենք, մենք ինքներս ուրանում ենք այդ ամենը և առնակոխ անում։

Մտէք, օրինակ, մեր կլուբները, որոնց անդամների 100-ից 99½ հայ են և տեսէք թէ ինչպէս են վերաբերւում դէպի մեր հասատատութիւնները, մեր մամուլը։

Այդ ամենի հետևանքներից մեկն էլ այն է, որ Թիֆլիսը հայութեան իբրև մի նշանաւոր կեդրոն, ոչ թէ հայոց սեպհական թատրոն չունի, ինչպէս ասել ենք նախընթաց համարի առաջնորդողում, այլ և մի հիւանդանոց, մի որբանոց, մի գրադարան, և ոչ մի շէնք, մի բան, մի թիզ տեղ չունի, որ ասուի, թէ սա պատկանում է հայոց հասարակութեան։

Հասարակական, ազգային բան գիտակցութիւնից և արժանապատուութեան զգացմունքից զուրկ ազգը ինչ ընտիր յատկութիւններով ու առաքինութիւններով էլ որ օժտուած լինի, նա միշտ յետ կըմնայ և ամեն տեղ էլ վերջինը կըլինի, և ամեն տեղ էլ օտար։

Հայերն իրենց այդ խոշոր պակասութիւններին են պարտական, եթէ իրենց լուսաւորութեան գործն առաջ չէ գնում, էլ ոչ ոքի մեղադրելու իրաւունք չունին։

Թող օրինակ առնեն հայերը, բարի նախանձից դրդուած, հենց յոյներից և սեռնեն թէ ինչպէս նրանք յարգում են իրենց լեզուն, իրենց հասատատութիւններն և այն ամենը բարձր են պահում, ինչ որ յունական է։

Իւրաքանչիւր ժողովուրդ առաջ է գնում, երբ նա իւր բնածին լաւ կողմերը մշակում է և իւր պակասութիւնների դէմ մաքառում է, և աշխատում է ուղղել ուրիշ ժողովուրդների օրինակներից խրատուելով։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԸ

«Նոր-Դար»-ը տարիներ առաջ հրատարակել է Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի դրութեան մասին յօդուածներ, նկատողութիւններ և աշխատել է այդ դպրանոցը բարեկարգ վիճակի մէջ տեսնել։ Այդ դպրանոցը մի քանի տարի առաջ մեծ ազմուկ էր հանել, որ տեսչի պաշտօնակատար պ. Զարբխեանը՝ հակառակ գնալով դպրանոցի կանոնադրութեանը՝ աւանդելի առարկաների մէջ մտցրել էր նոյնպէս յունարէն լեզուն. ժամանակ անցնելուց յետոյ պ. Զ. տիպուեցաւ լսել մամուլի և հասարակութեան ձայնին, ճանաչեց կանոնադրութիւնը և ձեռք վեր առաւ յունարէնից։ Այնուհետև մենք տարիների ընթացքում պարբերաբար տեղեկութիւն էինք առանում դպրանոցի երեսն վիճակի, de jure տեսչի և ուսուցչական խմբի միջև եղած անվերջ անհամաձայնութեան, de facto տեսչի լիագօր իշխանութեան և ուրիշ երևոյթների մասին, ոակայն հրապարակ չէինք հանում, մինչև կատարեալ տեղեկացանք այդ լուրերը։

Այժմ հասատատ պղբիւրից տեղեկանում ենք, որ իրերի դրութիւնը ոչ միայն չէ մեղմացել, այլ գնալով աւելի սուր կերպարանք է առանում, և մենք աւելորդ չենք համարում կրկին հրապարակ հանել Ն. դպրանոցի և նրա տեսչի պաշտօնակատարի խնդիրը։

A propos. տարին բոլորում է արդէն, որ պ. Զ. վարում է դպրանոցի տեսչութիւնը ոչ իբրև տեսուչ, այլ իբրև պաշտօնակատար տեսչի։ Հոգաբարձութիւնն երկու անգամ առաջարկել է պարոնին հասատատութեան, բայց երկու անգամ էլ մերժուած է. զարմանալի մարդիկ են նախիջևանցիք. այս կամ այն պաշտօնի համար պաշտօնակատար նշանակում են մի կամ երկու տարով. իսկ ինչ է նշանակում ամբողջ ութ տարի պաշտօնակատար լինել... երբ պիտի վերջանայ այդ պաշտօնակատարութիւնը։

Մենք գիտենք, որ Ն. դպրանոցը նիւթական միջոցների երբէք կարօտութիւն ունեցած չէ. տայ Աստուած, որ մեր միւս դպրանոցներն էլ այդչափ ապահով լինէին նիւթապէս։ Մեզ յայտնի է նոյնպէս, որ Ն. դպրանոցն ունի պարապաճանաչ ու բարեխիղճ և ըստ մեծի մասին համալսարանական ուսուցիչներ, որոնց պաշտօնավարութեան մասին մամուլի մէջ տակաւին ոչինչ դժգոհութիւն յայտնուած չէ. տայ Աստուած, որ մեր միւս դպրանոցներն էլ նոյնչափ նախապատրաստուած և մասնագէտ ուսուցիչներ ունենային։

Էլ ինչն է ուրեմն նախիջևանցիներին դժգոհելու և գանգատելու տեղիք տուողը,—կըհարցնէ, անշուշտ, ընթերցողը։

Եւ փող շատ ունի և լաւ ուսուցիչներ ունի Ն. դպրանոցը,—կըպատասխանենք մենք, բայց հմուտ կառավարիչ չունի, ընդունակ ղեկավար չունի։ Ո՛չ տեսչի պաշտօնակատարի և հոգաբարձութեան մէջ համաձայնութիւն կայ և ո՛չ նոյն պաշտօնակատարի և ուսուցչական խմբի մէջ միաբանութիւն ու համերաշխութիւն։ Մեզ հասած տեղեկութիւններին նայելով, յարաբերութիւնների և իրաւունքների մի տեսակ բաղխոնեան խառնակութիւն է տիրում այնտեղ։

Երևակայեցէք մի դպրոցական հասատատութիւն, որը հարիւր հազարներ է ծախսել և 10 տարուայ գոյութիւն ունի, սակայն չէք գտնիլ մի նախիջևանցի, որ համակրանքով խօսէր դպրանոցի մասին, շնորհապարտ սրտով վերաբերուէր դէպի այդ պատկառելի հասատատութիւնը, սիրէր, փայփայէր նրան, այլ, ընդհակառակն, ամենքը գըժգոհ, ամենքը անբաւական, ամենքը յուսահատուած երես են դարձնում դպրանոցից. շատ կան և այնպիսի մարդիկ, որոնք բաւական են համարում փակուած տեսնել դպրանոցը, քան թէ նրա այսպիսի անգոյն գոյութիւնը։

Պպրանոցի այս տխուր վիճակը յայտնի է, անշուշտ, և հոգաբարձութեանը, բայց ինչ է անում հոգաբարձութիւնը.—նոյնը, ինչ որ անում էին նախկին հոգաբարձուները, այսինքն «եօլլա» են գնում. և այդպէս «եօլլա» գնալով դպրանոցը մի անբնական վիճակի մէջ են ձգել, որովհետև պաշտօնակատար տեսուչ չունին, այլ ունին միայն պաշտօնակատար։

Զարմանալին այն է, որ այս հոգաբարձութեան նախագահը քաղաքագլուխ պ. Բալաբանեանն է, իսկ պ. Բալաբանեանն արգէն յայտնի է իբրև հեռատես, գործունեայ և եռանդուն մարդ,—և ահա մի դպրոցական հասատատութիւն, որի հոգաբարձութեան նախագահն է նոյն եռանդուն և անդուլ գործող մարդը, ենթարկուած է այսօր այսպիսի վիճակի։

Մ՛թէ պ. նախագահին յայտնի չէ դպրանոցի ներկայ վիճակը. մ՛թէ պ. Բալաբանեանը չի ուզում, որ իւր համաքաղաքացիների համար այդ կարևոր դպրանոցը վերջապէս ոտքի կանգնի ազատուելով իւր de jure և de facto տեսուչներից։ Հոգաբարձութեան և միւս անդամները, որոնք նոյնպէս ինտելլիգենտ մարդիկ են, մ՛թէ այդպէս են վերաբերում դէպի մի նուիրական հասատատութիւն, որի կառավարութիւնը ժամանակատրապէս յանձնուած է դրանց։

Մենք ուզում ենք հաւատալ, որ ներկայ հոգաբարձութիւնը կաշխատէ հեռացնել դպրանոցից այն պատճառները, որոնք նրա առաջադիմութեանն արգելք են հանդիսանում։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են.—Երկրի պարոն Կառավարչապետն ընդունելու համար պատրաստութիւններ են տեսնւում, որի համար մօտ 4000 րուբլի ծախք է նշանակուած։ Կաթողիկոսին դիմաւորելու համար Սիոնը դեռ ոչ օրից չէ նշանակել. այդ կանչ

Սինոդը, երբ կաթողիկոսի հաստատութիւնը յայտնուի Նրան։

—

Պարսից շահի խնդրանօք, օսմանեան վեհ. կայսը Համիդն ուղարկում է Պարսկաստան բժիշկների մի մասնաժողով խոլերային դէմ կռուելու և այդ կողմից ապագայ սպասելիք չարիքի առաջն առնելու նպատակով։

Բժիշկների խումբը կազմուած է 13—14 հոգուց, որոնցից 2-ը բժիշկներ են, մնացածը փելդշերներ և դեղագործներ։ Բժիշկների այդ մասնաժողովի անդամները բոլորն էլ Թիւրքիոյ են, մէկ քրիստոնեայ չկայ։ Իրանք այս օրերս Խանդուման և Թիֆլիսի վրայով կանցնեն Պարսկաստան. դրանք իրենց հետ տանում են 50 սընդուկ դեղերը և ախտահանութեան միջոցներ։

—

Հոկտեմբերի 5-ին Սրճանի նահանգական գաստարանում նշանակուած էր յայտնի Հաչի-Յակոբի և սրա ազգական Բէրգ- Տէր-Պետրոսեանի գործը, որոնք, ինչպէս յայտնի է, մեղադրուում են հանգուցեալ Մակար կաթողիկոսի իրերի յափշտակութեան համար։ Հաչի Յակոբը մեղադրուում է 26,000 րուբլու բանկային տոմսեր և մի քանի հազար րուբլու էլ իրեր գողանալուն համար, իսկ Բէրգ Տէր-Պետրոսեանը մեղադրուում է այդ գողութիւնը ծածկելուն համար։ Մեղադրեալների պաշտպանն է երգուեալ-հաւատարմատար պ. Շեհալէկեան։ Այդ գործում իրրև վկաներ կոչուած են Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսները, որոնցից առաջինը ներկայումս Օրեօլ, իսկ միւսը Պոլսում քաղաքացի է։ Որովհետև այդ երկու վկաների հրաւիրումը տեղ չէին հասցրած, իսկ Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսների վկայութիւնը գողութեան դէմ անհրաժեշտ է համարուում, այդ պատճառով, դատախազի խնդրանօք, քննութիւնը յետաձգուած է մինչև դեկտեմբերի 10-ը, երբ Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսները կը ներկայանան դատարանին իրենց վկայութիւնը տալու գողութեան դէմ։

—

1871 թուին ծնուած երիտասարդների զինուորակոչն այս տարի Թիֆլիսում սկսուելու է նոյեմբերի 1-ից։

—

«Արարատ» ամսագրի վերջին համարից իմանում ենք, որ 8 ամսուայ ընթացքում գործածուել և ճեմարանի վրայ ծախսուել է 64 հազար րուբլի. որուհետև է տալ սեպտեմբերի համար 10,000 րուբլի։ Այդպիսով տարուայ վերջը ծախքը կըլինի առնուազն՝ 104,000 րուբլի։ Տպարանը տալել է մի քանի գրքեր, ինչպէս Միսրանի աշխատութիւնները և «Արարատ»-ը. ճեմարանն ունի մօտ 140 աշակերտ։ Դրանց պահպանելու համար ծախսւում է առնուազն 104,000 րուբլի փոքրիկ և կլորիկ գումարը։ Դրա վրայ պէտք է աւելացնել և նոր քարտուղարի համեստ ռոճիկը և Պօլսից ապրող Գալուստ Տէր-Մկրտչեանի կարիքները լրացնելու համար անհրաժեշտ գումարները։

—

Ուսուցչուհիների և աշակերտուհիների Թիֆլիսի ռուսաց ընկերութիւնը հոկտեմբերի 18-ին ռուս ժողովրդական բանաստեղծ Կոլցովի մահուան տխնամեակի առթիւ գրականական-երաժշտական առաւօտ է տալիս։

—

Ռուսիայի պոստը երեք օր չարունակ չտատցուելով, վերջապէս տատցուեցաւ երէկ, հոկտեմբերի 16-ին։

—

Ստացանք «Արաքս» պատկերազարդ հանդիսի տոյն տարուայ առաջին գիրքը, որի մասին կաշխատենք առաջիկայ համարում խօսել։

—

Շատ անգամ նկատողութիւնները ենք արել քաղաքիս Հիւաքարչ վագոնների վրայ ծառայողների անկարգութիւնների մասին. նրանք այնպէս են վարուում, որ կարծես փողոցներն, ուր անց են կացրած Հիւաքարչի գծերն, անանուն ընկերութեան սեպհականութիւնն են և ոչ ոք իրաւունք չունի այն կողմերովն անցկենալու. այսպէս եթէ մի քանի սայլեր ճանապարհ չգտնելով մոլորուում կանգնում կամ ծանր են առաջ գնում, իսկոյն Հիւաքարչի ծառայողներն ահագին գոռում-գոչիւն են բարձրացնում խեղճ սայլապանների վրայ և նոյն իսկ Հեռաքի մարտկներով Հեծում են նրանց։ Այսպիսի անկարգութիւնները միշտ կրկնուում են և ուշագրութիւն գրաւնող չկայ։

—

Հինգշաբթի, հոկտեմբերի 15-ին հայոց դերասանական խումբը ներկայացրեց Սաթովսկու՝ «Արդիւնաւոր պաշտօն» կոմեդիան և «Տիկինը ննջում է» վոդեվիլը։

Ներկայացումը կենդանի անցաւ. ամբողջութիւնը, չնչին բացառութեամբ, գոհացուցիչ էր։

Այդ ներկայացումը կրկին անգամ ցոյց տուեց, որ եթէ մեր տեղական խումբն աշխատէ և բարեխղճութեամբ վերաբերուի գործին, կարող է հետզհետէ դրաւել հայոց քեմին անտարբերութեամբ վերաբերուող հասարակութեանը։

Սուբբէթ դերը կատարող օր. Վարդուհին մեծ առաջադիմութիւն է արել և մի քանի տարուայ ընթացքում կոմիկ պատառ կնոջ դերակատարութեան մէջ վարժուել է, այնպէս որ հաւասար աջողութեամբ լէթ թեթև սուբբետի, օրիորդ՝ տան ազախնի, և լէթ պատառ տանտիկնոջ դեր էր կատարում։ Բաւական առաջ է գնացել և տ. Մելիքեանը, որ համեմատաբար ամենից երիտասարդ դերասանուհին է։ Տիկինն աշխատութեամբ և բան հասկացող բեժիսորի առաջնորդութեամբ կարող է չատ տեղ բռնել մեր բեմի վրայ։

Այդ ներկայացմանն առաջին անգամ բեմ դուրս եկաւ օր. Ախաշեանը, որ, ինչպէս իմացել ենք, բուն զբաղումն է։ Օրիորդի խաղի մասին առաջին անգամից ոչինչ վճռական բան չենք կարող ասել. նա չարժուն է, համարձակ է, սրանք գնահատելի յատկութիւններ են, բայց ամենից գլխաւորը լեզուն է, որ կարող է ամեն բան խանգարել։ Օրիորդը հայերէն խօսում է բոլորովին ռուսական արտասանութեամբ։ Սա մի նոր և տարօրինակ երեւոյթ է. կարծես թէ օրիորդը ռուսերէն լինի խօսում և ոչ հայերէն։ Մինչև որ արտասանութիւնը չփոխուի, եթէ միայն կարելի է, նրա ամենաբնական խաղն էլ ոչինչ նշանակութիւն չի կարող ունենալ։

—

ԽՐԶՐՈՒՄԻՑ «Кав.»-ին հաղորդում են, որ այնտեղ հոկտեմբերի 7-ից մինչև 12-ը խոլերայից մեռել են 154, իսկ գիւղերում 87 հոգի։

—

ՌԱՇՏԻՑ.— «Նոր-Դար»-ի 145 համարում Ռաշտից յայտնած լուրի մէջ մի սխալ է մտած, որ պարտք եմ համարում ուղղել։ Պ. Աւետիս Փանեանց տեղիս ս. Թարգմանչաց եկեղեցուն նուիրել է ոչ թէ մի սուրբ պատկեր, ինչպէս յայտնած էր լուրի մէջ, այլ մի ձեռք պատարագիչ քահանայի զգեստ և 10 թումանի փող յօգուտ նոյն եկեղեցու դպրոցի։

—Իսփայէլ Պատկանեանի ընտանեկան օգտին ժողովուած է 140 դրամ (36 ր.)։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՒԼԵՐԱՑԻ ՄԱՍԻՆ

—

ԲԱԳՈՒ. հոկտեմբերի 1-ից մինչև 8-ը հիւանդացել են 2, առողջացել 2, մնում է 1.

—

ԴԱՆԶԱԿՈՒՄ հիւանդները չկան. գաւառներում հոկտեմբերի 5-ից մինչև 7-ը հաւանդացել են 3, առողջացել են 4. մեռել են 3, մնում էին 4.

—

ՔՈՒԹԱԻՍՈՒՄ հոկտեմբերի 1-ից մինչև 8-ը հիւանդացել է 1, առողջացել են 3, մեռել է 1, մնում է 1. Նահանգում հիւանդացել են 7, առողջացել են 3։ մեռել են 4, մնում էին 2.

—

ԿԱՐՍՈՒՄ հոկտեմբերի 2-ից մինչև 6-ը հիւանդացել են 3, առողջացել են 2, մեռել են 2, մնում էին 10. Նահանգում հիւանդացել են 8, առողջացել են 2, մեռել են 10, մնում էին 5.

—

ԴԱՂՍՏԱՆԻ շրջանում սեպ. 28-ից մինչև 30-ը հիւանդացել են 65, մեռել են 54, հոկտեմբերի մէկին մնում էին 74.

—

ԵՐԵՒԱՆՈՒՄ սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 4-ը հիւանդացել են 3, մնում էին 3. Նահանգում հիւանդացել են 31, մեռել են՝ 24, առողջացել են 2, մնում էին 6.

—

ՋԱՒՔԱԶԻ շրջանում հոկտեմբերի 4-ից մինչև 8-ը հիւանդացել են 3, առողջացել է 1, մեռել են 3. Խոլերայով հիւանդները այլ ևս չկան։

ԱՐԴԵՆ ԺԱՄԱՆԱԿՆ Է. *

—

ԵԹԷ ևրոպայում, ուր ամեն տեսակ գիտութիւնների տարբական տեղեկութիւններն տարածուած են նոյն իսկ հասարակ գասակարգի մէջ, հետևաբար և, մեզ հետ համեմատելով, անհամեմատ աջող պայմանների մէջ են գտնուում, բայց և այնպէս գարձեալ կարիք է զգացուում ուսումնարաններում յատուկ բժիշկների հսկողութեան ենթարկելու, որքան և առաւել այդ պէտքը զգալի պիտի լինի մեզ համար, որ երբէք չենք կարող պարծենալ մեր ծնողների պարտաճանաչութեամբ, մեր ուսումնարանական շինութիւնների լիովին յարմարութեամբ, մեր ուսուցիչների առողջապահական կանոնների մասին ունեցած հմտութեամբ։

Մեր ուսումնարանները էլ, ինչպէս ամեն մի ազգի ուսումնարան, ենթարկուած են բազմաթիւ անաջող պայմանների, որոնք կորստաբեր ազդեցութիւն են ունենում աշակերտների առողջութեան վրայ՝—կարճատեսութիւն, արեան նուազութիւն, ջղայնութիւն, մէջքի կորութիւն, քնդհանուր վատառողջութիւն, գժգոյն դէմքի ոսկրացած մարմին—ահա այն տարութիւնները, որոնք տարրական դպրոցներից սկսելով հետզհետէ զարգանում են միջնակարգ ուսումնարաններում և սարսափելի հեռանքներ թողնում։

Աւելացնենք սրա վրայ նաև այն հանգամանքը, որ մեր ուսումնարանների աշակերտները մեծ մասամբ հասարակ գասակարգից, մանաւանդ աղքատ ծնողների որդի լինելով, շատ անգամ իրենց առողջութիւնը կորցնում են նաև իրենց քնատեղիական կեանքի հակառողջապահական պայմաններում. և ով է այն ծնողը, որ բժշկի օգնութեան դիմէ իւր որդու համար։

Կամ թէ չէ շատ անգամ պատահում է, որ երեխան տկարանում է վարակիչ հիւանդութեամբ. ծնողներն նրան ուղարկում են ուսումնարան՝ քանի ոտներում այժ ունի կամ հիւանդութիւնից վեր կենալուց անմիջապէս յետոյ։

Աւտանց մարգարէ լինելու էլ կարելի է գուշակել, թէ որքան վտանգների է ենթարկուում ուսումնարանը՝ մանաւանդ վարակիչ հիւանդութիւնների տարածուած միջոցին, և որքան վնասները կարող են քաշել աշակերտողները գուցէ մի չնչին անգիտակցաբար գործուած անզգուշութեան պատճառով։ Իսկ դրանց առաջը կարելի էր ամենահեշտ կերպով առնել, եթէ միայն ժամանակին բժիշկ հասած լինէր, եթէ ուսումնարանը կանոնաւոր բժշկական հսկողութեան ենթարկուած լինէր։

Որքան մեզ յայտնի է, բժիշկների բացակայութիւնն զգալի է ոչ միայն մեր եկեղեցական-ծխական գպրոցներում, այլ և թեմական գպրոցներում, որոնք զուրկ են բժիշկներից, մինչդեռ հարկաւոր էր, որ հենց բժիշկները ներկայ լինէին մանկավարժական ժողովներին, որպէս զի ամեն մի խնդիր թէ մանկավարժական և առողջապահական տեսակէտից քննուէին։

Կարծում ենք անվիճելի է, որ մեր ուսումնարանները կարիք ունին բժշկա-առողջապահական կանոնաւոր հսկողութեան, որպէս զի կրթուող մասաղ սերունդը հնարաւորութիւն ունենայ կանոնաւոր մտաւոր սնունդ առնելով զուրկ չմնայ նաև մարմնի առողջութիւնից։ Բժիշկները ամեն անգամ ուսումնարան այցելելով կարող կըլինէին իսկոյն և եթէ տեղնուտեղը հսկել և ոչնչացնել այն պատճառները, որոնք կարող են վտանգաւոր լինել ուսումնարանի համար։ Բայց այդ՝ բժիշկները կարող էին այդպիսով ոչ միայն զուտ ուսումնարանական տկարութիւնների առաջն առնել, այլ և բժշկել դրսից բերուող հիւանդութիւնները կամ դուրսը հիւանդացող աշակերտներին։

Այժմ անկասկած առաջնակարգ խնդիրը է դառնում, թէ ինչ միջոց կայ մեր ուսումնարանները բժշկական կանոնաւոր հսկողութեան ենթարկելու համար։

Եթէ մեր ուսումնարանները գոյութիւն ունենային ոչ միայն եկեղեցական արդիւնքներով, այլ և առանձին, յատուկ ուսումնարանական գումարներով, եթէ մեր ուսումնարանների հոգաբարձութիւնը լոկ երեքլսխներից պատրաստի փողն առնելով և ուսուցիչներին բաժանելու պարտաւորութիւնից չազատանայիլ, անկասկած ամեն մի ուսումնարան հնարաւորութիւն կունենար իւր յատուկ բժիշկն ունենալու։

Բայց քանի որ մեր ուսումնարանների նիւթական միջոցները շատ սուղ են և հնարաւորութիւն չկայ մի այդպիսի քայլ անելու, պէտք է դիմել ուրիշ միջոցների։ Իսկ այդ միջոցները կարող են զանազան լինել։

Ա. Կարող էր Հոգևոր Բաժնագործն կառավարութիւնը կամ յատուկ բժիշկները հրաւիրել և կամ արդէն պաշտօն կամ ազատ պարապմունք ունեցող բժիշկների հետ պայման կապել՝ որոշ ղրջանի ուսումնանների վրայ հսկողութիւն ունենալու, հիւանդ աշակերտներին դարմանելու համար։

Բ. Նոյն հոգևոր կառավարութիւնը կարող էր բժիշկներին հրաւէր կարդալ՝ ձրիապէս մարդասիրական մի գեղեցիկ պարտք կատարելու։

Գ. Ուր մի քանի ուսումնարանները կան, կարող էին միանալ և մի որոշ գումար յատկացնել առանձին բժիշկ հրաւիրելու համար։

Դ. Վերջապէս ուսումնարանները իրենք կարող էին դիմել զանազան բժիշկների խնդրելով, որ չզլանան շաբաթական մի-երկու ժամ այցելել ուսումնարան և խնամել չքաւոր, խեղճ, շատ անգամ որը և անտէր երեխաներին։

Կարծում ենք, որ Թիֆլիսում, օրինակ, կըգտնուեն այնքան հայ բժիշկներ, որ մարդասիրաբար յանձն կառնեն այդ բարի գործը։ Մենք այդ հաւատն ունինք հայ բժիշկների վրայ մանաւանդ այն պատճառով, որ արդէն կան բժիշկներ, որոնք այդպիսի գործեր կատարում են՝ մէկը կանոնաւորապէս այցելում է Թանդուեան ուսումնարանը, երկրորդը՝ ձրիապէս դարմանում է հայ ուսուցիչներին, հայ աշակերտներին—միայն իրենց, բժիշկների տանը։

Մրրիկ չեն գտնուիլ նոյնպիսի ուրիշ բժիշկներ էլ, որոնք յանձն առնէին այցելել ուսումնարան, թեթևակի այդ անցկացնել ուսումնարանի ողջակիցի պայմանները, նպատակայարմար խորհուրդներ տալ՝ թերութիւնների առաջն առնելու համար, հսկել աշակերտների առողջութեանը։

Կարծում ենք կըգտնուին։

Իհարկէ, մենք չենք սպասում, որ մեր այս առաջարկն իրականանալով ամեն ինչ կանոնաւորուի մեր ուսումնարանական գրութեան մէջ, աշակերտները բոլորովին զերծ կըմնան ախտութիւններից. ոչ, մենք այդ չենք կարծում. բայց հաւատում ենք, որ այդ միջոցով կարելի կըլինի գոնէ կեսել այն վատառողջ էակների թիւը, որոնք իւրաքանչիւր տարի զուարթ, կայտառ, առողջ ուսումնարան են մտնում և ժժգոյն, ոսկրացած, կզացած դուրս գնում՝ աւելի բարձր ուսումնարան մտնելու համար և ապա հասարակութեան ցաւագար անդամների թիւն են աւելացնում։

Կարծում ենք, ժամանակն է այս կարևոր խնդրի մասին մտածելու։

Միհրան

ԺԴ. ՏԱՐԵԴԱՐՁ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՁԵՄԱՐԱՆԻ.

—

Սրտատրոփ սպասում էինք այդ ժամանակին. անգուսպ ցանկութիւն կար մեր սրտերում մի անգամ ևս, քանի դեռ կենդանի ենք, երախտագիտութեամբ մտաբերելու այն անշուք շիրմին, որ Մայր Աթոռն զանգազատան հիւսիսային սեան մօտ տարածութիւն է բռնած և մի տաք համբոյր գրոշմելու ցուրտ մարմարիոնին, որ կափարիչն է այն անգուռ, աներդ անակին, ուր մեծ մարդու մնայորդները են հանգչում։

Սկսուեցաւ պատարագը. բայց ինչ տառն երգեցողութիւն. ժողովրդի քաղցրիկ չիշտակը, որ ամեն ներկայ եղողների սրտում երախտագիտութեան զգացմունք էր յարուցանում, կարծես չէր ոգևորում նրա տաճերին։ Պատարագից անմիջապէս յետոյ չուրջառագեստ միաբանութիւնը և աշակերտները շարական երգելով, ժողովրդի բազմութեան հետ մօտեցան այն շիրմին, որ ծածկուած էր քողով և վրան եպիսկոպոսական Թագ ունէր. լուցեալ մոմերով՝ միաբանները շրջապատեցին այդ դամբանը։ Հոգեհանգիստն սկսուեցաւ. բազմութեան մէջ տիրող լռութիւնը կատարեալ էր. ամենքի դէմքի վրայ ափսոս ու ատելի կրկռդայիր բազմերախտ հայրապետի համար։ «Երջանկայիշատակ հիմնադիր Ձեմարանի Դէորգ Պ. Հայրապետ ամենայն Հայոց» խօսքերը լսելիս սարսուռ է անցնում ամենքի մարմնով և նրանց աչքերը դէպի այն կողմն է դառնում, որ նա իւր անգուլ ջանքերով արժանապէս կանգնեցրեց իւր անմահութեան համար, խաւարի և ագիտութեան դէմ յաղթանակ տանելով։ Հոգեհանգիստը վերջացաւ, միաբանները ցրուեցան, աշակերտները Թողին գերեզմանը և դէպի Ձեմարան գնացին.

---

*) Տես «Նոր-Դար»-ի № 160.

բայց չգիտենք յիշեցնի արդեօք բազմերախտ Հօր վերջին խրատը, որ բերնէ բերան յաջորդներին պիտի աւանդուէր. «Զաւակներս առաքինի եղէք»։

Ժամի 11-ն է. ժողովուրդը կանգնած է այն հաստատուելիքան առաջ, որի նպատակը Հայոց գլուխ ժառանգաւորաց, սոյն խօսքերի վերջումը երկու քանդակած գրքերի վրայ կարդացուում են Գ. Ս. Ք. Ի. ըսկզբնատառերը չորս աւետարանիչների և հայոց ուղիղ ձայնաւոր գրերը, որ եպիսկոպոսական Թագ ու գաւազանի հովանիներին վայելում։ Այս նշանաբանների մէջն է երջանկայիշատակ հիմնադրի բուն նպատակը, որ ազգի իսկական կարիքն ու օգուտն է ամփոփում։

Հասկանալի է Թէ այդ ուսումնավայրը եկեղեցականներ և ուսուցիչներ պիտի տայ ազգին, որոնք տոգորուած լինին աւետարանի վեհ գաղափարներով և հայրենի ու օտար գիտութեան անկեղծաւոր սիրով։

Ցառնիայս Ժողովրդի դիմացը բազկաթոռի վրայ բացուած է սրբազան «Տէզակալ Հայրապետութեան ամենայն Հայոց»-ը. նրա կողքին տեղ է բռնել տեսուչ Սեդրակեան սրբազանը և այլք միաբաններից ըստ կարգի։ Հանդէսն սկսեց տեղապահ սրբազանը «Օրհնեալ տէր մեր» աղօթքով, որիցետոյ մի տուն շարական երգուեցաւ։ Ապա տեսչի օգնական՝ պ. Սագաթելովը, ամբիոն բարձրանալով, Հեմատքանի ԺՀ-րդ տարուայ հաշիւը տուեց։ Դա մի նոր տեսակ հաշիւ էր։

Պ. տեսչի օգնականն իւր հաշիւն սկսեց մի տեղեկութիւնով, որի մէջ բացատրեց Թէ միայն և միայն բնական գիտութիւններն են մեզ պէտք և նրանց մէջն է մեր յառաջադիմութիւնը. ապա համեմատեց մի տարիական նոր Հեմարանի բարոյական եւ մտաւոր բարձրութիւնը նախկին Հեմարանի հետ, որը պ. Սագաթելովի ակնարկներով, յետադէմ, մանուկների միտքը կաշկանդող մի դպրոց է եղել։ Պ. Սագաթելովի տեսլով նոր Հեմարանի արշալոյսը ծագեց այն օրուանից, երբ հին ուսուցիչներն արձակուեցան և «նոր ոյժեր» հաւաքուեցան։ Նոր ուսուցիչներին Թուելիս պ. Սագաթելովը չերտեց այն հանգամանքը, որ դրանք համալսարանականներ են. և սկսեց իրենից. «Մոսկուայի կայսերական հանալսարանի իրաւարանական ֆակուլտէտի կանդիտատ պ. Յովհաննէս Սագաթելեանց» և այլք քան իրենց կարգի։ Նրանք, որ համալսարանում չեն եղել, ներքուստ էին իրրև փոքռուած և ծառացած մարդիկ։ Հերթը հասաւ եկեղեցական ուսուցիչներին, որոնք բնագիտութիւն չեմանալու համար արժանապատիւ պատուանունից էլ դուրկ մնացին։

Մանուկ Հեմարանի առաջադիմութեան մի ապացոյն էլ այն է, «տեսչի օգնականի» ասելով, որ աշակերտներն ազատ են վերաբերուել դէպի իրենց դասերը, ազատ են եղել իրենց առօրեայ գործերի և բաղձանքների մէջ, այդ իսկ պատճառով առաջադիմութիւնն ակներև է նրանով, որ «տարուայ վերջը հոմարեա դասարանում մնացող չեղաւ»՝ (լաւ ապացոյց է)։

Երրորդ բարեփոխութիւնն այն է, որ Սեդրակեան սրբազանը միայն մի աշակերտ է աբձակել, մինչդեռ առաջ մի քանիսն էլին աբձակուում։

Չորրորդ՝ «վերականգնեցաւ տեսչի օգնականութեան անհրաժեշտ պաշտօնը, որ 88-ից դադարել էր», որի համար Հեմարանը բաղդ ունեցաւ պ. Սագաթելովին տեսնելու։

Հինգերորդ՝ առաջադիմութիւնն իւր կատարելութեան հասաւ. «առաջուայ գոնեատ աշակերտների վերաբերմամբ նկատած են կարմիր և գոյութիւն աշակերտներ, առաջուայ կատացած երանները այժմ ուղղուել են. պ. բժիշկ Զարգարեանի և նրա ֆէլդշէրի օգնութեամբ Հեմարանը ծանր հիւանդ չի ունեցել վորել տուած քանքանի ջրով, որ եկել և լմնն է Թափուել ու օրը զով պահել, (այս տարի ամիս ու կէս քանքանով ջուր չի եկել, իսկ լիճը դատարկ էր)։ աշակերտները ազատ են մնացել հիւանդութիւններից և խոլերից»։ Ցետոյ գովաբանուեցան աշակերտները։

Ջ-րդ՝ «Ուժգնութիւններ չեղան Հեմարանում, ինչպես շատ անգամ պատահել է առաջ» «միայն տարուայ վերջումն անսպասելի կերպով հրաժարուեցաւ պ. Կոստանեանը, իսկ նրանից յետոյ Սարգիս եպիսկոպոսը տեսչութիւնից»։

Այս վերաբերութիւնից յետոյ սկսուեցաւ յարձակողական դատափետութիւնը նախկին Հեմարանի վարիչների. յանկարծ յանդունէ չերտեցան հանգուցեալ հայրապետը, Ն. Նահապետը, որ «ս. և բ. դասարանները փակել են» և Սարգիս եպիսկոպոսը, որ «մի աշակերտ արձակել և նորից ընդունել է»։ Ապա կարդաց վերադարձութեանց ցուցակը, որին յաջորդեց մի վերջաբան, ուր յոյսեր արձագանգեց պ. Սագաթելովը, որ Նոր հայրապետը կըգայ և իւր փայփայած գաղափարների ու ապատամարութեան կատարեալ լուսն կըտայ։

Տեսչի պարոն օգնականի հաշուի հաստատ բովանդակութիւնից իսկ նկատուում է, որ այս անտեղի և անարժէք գովասանքներն ու պարսաւները մի նեղ կուսակցական դաս էր, որ տուեց պ. Սագաթելովին իւր աշակերտներին, որոնք «պարտաւոր են ազգի ապնիս (????) կուսակցութեան հետեւելու»։ Հոգևոր Հեմարանին և Դէպոզ կաթողիկոսի տարեդարձն էր, բայց մենք ոչ Դէպոզին, ոչ եկեղեցու, ոչ կրօնին, ոչ բարոյական դաստիարակութեան անուն և ոչ համակրութիւն չտեսինք դէպի այդ անուններն։

Յիշենք միայն, որ պ. Սագաթելովն իւր Հառի մէջ հաւատարիմ է իւր կուսակցութեան. նա պարտաւոր էր գովել անցեալ տարի Սարգիս եպիսկոպոսին նման Հառով, որովհետև նրան անպատելի պաշտօնի հրաւիրեց. այս տարի տեսուչը նա չէ, ուրեմն և պարտաւոր է յանդիմանել։ Նա պիտի օրուայ խնդրից հեռանար, Դէպոզ կաթողիկոսի բարի յիշատակն արձագանգեր մոռանալ և անհնազանդութիւնները վերաբերէր, որոնցից կախուած է իւր գոյութիւնը. նա պիտի գովէր աշակերտներին, որպէս զի բարոյական հեղինակութիւն Հեռք բերելու փոխարէն, որ անկարող է, երեխաների անհասկրութիւնը գրգռելով, փայփայելով ապահովէ իրեն։ Նա պիտի յաբձակում գործէր Նախկին Հեմարանի վերկավարների վրայ, որոնց մէջ իւր «առաջադէմ մարդով» բոլորից յետ քնկած էր. նա պիտի աշխատէր անուանարկել ս. Նահապետեանին, որ մի տարի Սագաթելովին անյարմար գրառելով արձակեց Հեմ. ուսուցչութիւնից։

Մենք սպասենք մինչև որ Սագաթելովի Հառը «Արարատում» կամ նրան հոգևկից Թերթում տպուի. ցանկալի է որ անխոփոխ տպագրուէր։

Գուրգէն.

Էջմիածին, 27 սեպ.

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՈՒԱՑԻՑ

I.

ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐ.

Կոնգրեսների և ցուցահանդէսների Թիւը տարէ տարի աւելի և աւելի չատանում է։ Այդ երկու, միմիանց նման միջոցներն ազգերի մէջ կապ հաստատելու, գիտութեան և արուեստի փոխարինութիւնը հեղհեղացնելու գործ XIX-րդ դարու ծնունդ են. նրանք դեռ նոր են զարգանում, իսկ ապագայում նրանցից կարելի է մեծամեծ օգուտներ սպասել։

Մանաւանդ crescendo են դնում ցուցահանդէսները. նրանց և ինչ տեսակ ասես ցուցահանդէս չի եղել՝ գիւղատնտեսական, անասնական, արդիւնաբերական... այսանց Կոլումբոսի ցուցահանդէսն է, այնտեղ գեղատնտեսական-Թատրոնական, Ռուսիայում—Փրանսիական և ընդհակառակը. միևնոյն ցուցահանդէսը գալիս է քաղաքից քաղաք. հիմնւում են մշտական և ժամանակաւոր, համաշխարհային կամ ազգային ցուցահանդէսներ,—ոնց նրանց Թիւը համարել չես կարող։

Մոսկուայումն էլ այս տարի բացուեցան ցուցահանդէսներ, որոնցից երկուսն այժմ էլ բաց են։ Ցուցահանդէսների Թիւն էր երեք, կամ ուրիշ հաշուով—հինգ։ Այդ ցուցահանդէսներն են էլէկտրական, որը զետեղուած էմշտական ունիվերսալ-ցուցահանդէսի շէնքերում, բուսաբանական, որն արդէն վիակուել է, և հնագիտական ու աշխարհագրականն։

Էլէկտրական ցուցահանդէսն անցեալ տարուայ այստեղի Փրանսիական ցուցահանդէսի մանրապատկերն է. գունաւոր շաղրուանները, աշագին քանակութեամբ ռեստորանները, անվերջ ադմուկ և դղրդոց,— որ լսելի էր և Փրանսիական ցուցահանդէսի մէջ մեքենաների բաժինում,—նորաշխար արդագրական մեքենաներ, էլէկտրական լուսատրութիւն ամեն տեսակի։ Հետագրքրելի են էլէկտրական լուսատրութեան մի քանի նորագոյն գործադրութիւնները Թատրոնական բեմի համար. էլէկտրական լոյսն այս և այն գոյնն է տալիս դերասանուհիներին և այդպիսով, օրինակ, կուլիսների գոյնը փոխւում է, երբ արևը ծագում է և կամ մայր մանում։ Էլէկտրական լոյսը գործադրւում է նորաշխար մեքենաներով։

Այստեղ կարելի է ծանօթանալ, օրինակ, էլէկտրական գանգակների և հեռախօսների ամեն տեսակների, ամեն սիստեմների (կորնէլ) հետ։

Մեծ տեղ են բռնում այստեղ և էլէկտրականութեան հետ կապ չունեցող վիտրինները։ Նրանցից մի քանիսը — օրինակ գերազանտեսական գործիքների կամ ժամացոյցի վիտրինները—նոր են բացուել, մեքսները կային և առաջ, և պատկանում են մեջագգային ցուցահանդէսին, որը, որքան մեզ յայտնի է, պ. Մալիևիչի Հեռներեցութեամբ և աշխատանքովն է առաջ եկել։

Առանձին վճռով ցոյց են տալիս բուսական հետաքրքրելի և գուարճալի նորութիւնները. օրինակ, լաբերինթոս՝ հայելիներից շինած պատեր ունեցող սենեակներ. մարդ մտնում է մէջը և կորչում է Հանդապարհը, որովհետև ամեն կողմն էլ կարծես միևնոյն առարկան, միևնոյն անձն կամ ինքդ քեզ ես տեսնում. գժտարութեամբ ես գտնում դուրս գալու Հանդապարհը և այդ դու շրջապատուած ես հայելիներից շինած եռանկեան մէջ. մի քանի մարդիկ հայելիների մէջ արտատիպելով միմեանց մէջ, կրկնապատկուում և բազմանում են, 3 մարդ մի աշագէն ամբոխ են կազմում։ Այստեղի մուտքն արժէ 30 կ., 20 կ.։ Նայում ես չարժական լուսանկարները, որոնք կենդանի պատկերների ապատրութիւն են Թողնում։ 30 կոպէկ ապատրով կարող ես հեռախօսով լսել Մեծ Թատրոնի օպերան (հինգ րոպէ միայն). առանձին վճարով ցոյց են տալիս Հայնահօսները և այլ հետաքրքրելի բաներ։ Գարեջրում, առանձին դահլիճում, յայտնի Գլաուբի վերկավարութեամբ 100-ի չափ նուագողներից բազկացած երաժշտական չխումբը նուագահանդէսներ է տալիս. այստեղ էլ առանձին վճար է։

Նուագահանդէսները լինում են երկու տեսակ՝ հանրամատչելի և սեմֆոնիական։ Մի քանի անգամ այսպիսի օրագարձ բարձրացաւ, որը մինչև ցած իջնելը գիշերուայ (ժամը 12-ը) մոսկուեան մէջ նշմարւում էր, շնորհիւ էլէկտրական արեգակնափայլ լուսաւորութեան. տան կտուրի վրայ հաստատուած էլէկտրական պրոժէկտորն ամբողջ ժամանակ աշագին լոյս էր ձգում օդապարիկի վրայ. սկզբից երևում էր լուսաւորուած աշագին օդապարիկը, յետոյ օդապարիկը հեռանում էր, լուսաւորը գոյնն էլ փոքրանում, մինչև որ փոքրիկ կէտի չափ եղաւ և յետոյ անհետացաւ։ Օդապարիկն իջաւ քաղաքից դուրս։

Էլէկտրական ցուցահանդէսը չատով փակուելու է. այս ամսի 11-ին փակուում է և մնաց ցուցահանդէսը, որի մասին մենք կըխօսենք սաորև։

Գատմաբանական Հանգարանի պահլճներում, այնտեղ, ուր անցեալ տարի բոյն էր դրել մեջքեն-ասիական ցուցահանդէսը, այժմ գետեղուել է հնագիտական-աշխարհագրական ցուցահանդէսը (կամ հանդէսները, եթէ նայենք նրանց վրայ երբև առանձին-առանձին ցուցահանդէսների վրայ)։ Առաջին և երկրորդ դահլիճներումն է հնագիտական բաժինը, ուր մի քանի վիտրիններ կան հնագոյն զարդարանքներից, որոնցից մարդ զարմանում է, Թէ ինչպիսի ծանր առարկաներով էին զարդարում առաջուայ ժամանակ լինելս գլուխները կանայք. նոյնպէս և, այն է մարդու մաքին գալիս, որ ալճնուելն ու զարդարուելը կանանց նոյն բնութեան մէջն է եղել. ինչպէս այժմ, հեն ժամանակներումն էլ կինը հակուած է ունեցել զարդարուելու աւելորդ առարկաներով։ Կան մի քանի վիտրիններ էլ հնագոյն զէնքերի, շատ հետաքրքրելի հետազօտութիւնների և, կարելի է ասել, ամեն բան էլ գրանցով վերջանում է, այնքան չնչին է հնագիտական մասը։

Աւելի մեծ է, հետաքրքրելի և բազմակողմանի աշխարհագրականը. սա լինն մասերից է բաղկանում՝ պետերգուած առանձին-առանձին դահլիճներում։ Այստեղ գուք կըգտնէք և հնագիտական նշանակութիւն ունեցող քարտէզները, օրինակ XVI-դարի մի քարտէզ, կարծեմ առաջինը Ռուսիայում, և ամենանորագոյնները, զարմանալի ճշտութեամբ և մանրամասնութեամբ կազմած, օր. Հայաստանի քարտէզը, որտեղ նշանակուած է ամեն մի քաղաք, ամեն մի գիւղ գրեթէ։ Կան այստեղ ուռս երևելի Հանապարհորդողների ժողովածուները, օր. Գրժեվալսկու, Բոգդանովու, Դրոմբրչևսկու և այլն, որոնք շատ հետաքրքրելի են և ոչ մասնագէտի համար։ Կան բազմատեսակ այլբոմներ և նկարներ, որոնք կարող են Հշգրիտ գաղափար տալ զանազան տեղերի և ազգութիւնների մասին. իսկ մասը գարսած զանազան քարտէզները, վիճակագրական Թերթիկներն և այլն աւելի ևս հետաքրքրում են մեր ծանօթութիւնը այս կամ այն երկրի և նրա բնակիչների, բնութեան հետ հետաքրքրելի են, օրինակ, այլբոմների չինական և եապոնական մասերը, որոնցից դուք կարող էք ծանօթանալ եապոնիայի և բնութեան և կուլտուրայի և բնակիչների, նրանց տիպարների, կենցաղավարութեան, փողոցային կեանքի հետ և այլն։ Գոնդամերի Թէյի ժողովածուները և նկարները ծանրիմացնում են մեզ Թէյի պատրաստման և վաճառականութեան հետ։ Ոչ պակաս հետաքրքրելի են Անդրկասպեան և Անդրիովկասեան երկրների վիտրինները։

Վերջին դահլիճում, Մոսկուայ քաղաքի ցուցահանդէսին կից դուք կը գտնէք Կովկասը։ Այստեղ են և Կովկասի երաժշտական գործիքները և գործուածքները զանազան տեսակ. քանի մի տասնեակ նկարները Կովկասեան ալեսան ալեների և բնութեան. ամենայաջողները Լոնգոյի վրձինն են պատկանում։ Բաշինջաղեանի նկարները՝ «Մասիս», «Էլբրուս», «Սղնախից Թիֆլիս տանող Հանապարհը» անգոյն են, չեն Թողնում կովկասեան բնութեան տպաւորութիւնը. գեղեցիկ, բայց սոսկալի իւր անդունդներով Էլբրուսը մի հաստարակ Հիւնագապաթի լեռն է ներկայացրած. չատում եմ նկատել, որ ես մասնագէտ չեմ այս դէպքում, բայց այդ տպաւորութիւնը միայն ես չէի որ քաւացայ. նմ բնակեցիներս էլ նոյն կարծիքի էին, մանաւանդ ուռսները, որ աւելի են հասկանում։ Չմոռանամ այն ևս յիշել, որ չգիտեմ որ դահլիճում մի սեղան ծածկուած է Թուրքական հրատարակութիւններով, որոնց մէջ տեսանք և հայերէն գրքեր՝ քերականները, աւետարանները, չետոյ ոմն Զօպանեանի քանատեղծութիւնը, որոնք կարող են օրինակ լինել գեղեցիկ տպագրութեան (և հարկէ Թրքական) և անհամ պարունակութեան. էնցիկլոպեդիստ Զօպանեանն ամեն ինչ գետեղել է իւր գրքում—և արձակ, և ոտանաւոր և գրաբառական յօդուած, և վէպիկ, և մի ինչ-որ «Լանջեր» վերնագրով պրոնոգրաֆիա,—գարմանալի բարեբոնեան խառնակութիւն։

Ցառում եմ, որ այս պարոնով էլ պիտի վերջացնեմ իմ յօդուածը։

Այս ցուցահանդէսին մասնակցել են և օգնել գրեթէ ռուսաց բոլոր միութիւնները և տեխնիկական ուսումնարանները։ Ցուցահանդէսի նպատակն է, ինչպէս ասում է պրոֆ. Անուչինը, ժողովել Ռուսիայի (եւրոպական և ասիական) հոգատարութեան վերաբերեալ բոլոր եղած նիւթերը՝ քարտէզները, պլանները, գանազան տեղերի պատկերները, վիճակագրական, գիոլոգիական և այլն հրատարակութիւնները, ազգագրական և այլ ժողովածուները, որոնք հետաքրքրելի կարող են լինել ինչպէս մասնագէտի, նոյնպէս և որոշ չափով առհասարակ զարգացած հասարակութեան համար։

Մ ի ն ա ս

Մոսկուա, 7 հոկտեմբերի։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿ ԴԱՍԱԿԱՐԳԸ

(Վ.Բ.)

Բացի բանուորներից և ազքատ կալուածատէրերից, կան նաև մուրացկաններ, որոնց Թիւն օր օրի վրայ աւելանում է Ֆրանսիայում։ Միայն Գարիզում, օրինակ, 1886 Թուին ոստիկանութիւնը 6000-ից աւելի մուրացկան է ձերբակալել, իսկ 1887 Թուին՝ աւելի քան 8000 հոգի։ Ինչ ասել կուզէ, որ ոստիկանութիւնը չէր կարող բոլոր մուրացկաններին կալանաւորել։ Միւս մեծ քաղաքներում ևս պակաս չէ մուրացկանների Թիւը։

Mansuy Ruret և ուրիշների հաշուով մուրացկանների ընդհանուր Թիւը 5 միլիոնի է հասնում, ուրիշ խօսքով մի մուրացկանն ընկնում է 8 հոգու վրայ։

Կայ մի դատակարգ էլ, որ Թէև ողորմութեան համար ամեն մի պատահողին իւր ձեռը չէ մեկնում, այլ ամօթխածաբար Թաք է կենում, բայց այդ դատակարգի մարդիկ չեն կարող առանց բարեգործների օգնութեան գոյութիւն ունենալ։ Դրանց Թիւն էլ քիչ չէ Ֆրանսիայում։

Assistance, publique-ների հրատարակած հաշիւներից երևում է, որ միայն Պարիզում այդ բաղդազուրկների Թիւը տարեկան 200,000—250,000-ի է հասնում։ Սակայն դեռ այդ իսկական Թիւը չէ՝—շատ և շատ չգալով բայց ամօթխած բնաւորութիւնը չեն համաձայնում բարեգործական հաստատութիւններին դիմել՝ աւելի լաւ համա-

*) Տես «Նոր-Դար» № 144.

բերով տանջուել, սովամահ լինել, քան թէ ուրիշից օգնութիւն խնդրել։ Ո՛վ չէ լուսմ այն ապուակը, որ պեռ անցեալ ձմրանը բարձրացաւ Պարիզում սովամահ եղած մի ամբողջ ընտանիքի, ցրտից սառած քոյր ու եղբօր և այլ այսպիսի սրտաճմլիկ պատմածների առիթով։

Նշանաւորն այն է, որ բարեգործական ընկերութիւնների օգնութեան դիմողների թիւը տարէ տարի աւելանում է. վերջին երկու տարուայ ընթացքում այդ յաւելումն 24—25%-ի է հասել։

Եւ այդ երևոյթը մի միայն Պարիզում չէ, այլ և բոլոր դեպարտամենտներում։ Բիւրեղի հետազօտութիւններից երևում է, որ աղքատութիւնից տանջուող և ոչնչացողների $^1/_3$-ը օգնութեան չէ դիմում։ Եւ որովհետև մնացեալ $^1/_3$-ի թիւը հասնում է 1,600,000 հոգու, ուստի ընդհանուր թիւը պէտք է որ 5 միլիոնից պակաս չլինի. այսինքն՝ դարձեալ 8 հոգու վրայ մի չունևոր է գալիս։

Այսպիսով ուրեմն Ֆրանսիայում կան 1) մուրացիկները, որոնց թիւը 5 միլիոնի է հասնում, 2) օգնութիւն ստացող և օգնութիւն չընդրող, ամօթխած աղքատները, որոնց թիւը նոյնպէս 5 միլիոն է. 3) բանուորները, որոնք ոչինչ սեպհականութիւն չունեն, այլ բացառապէս ապրում են իրենց ֆիզիքական ոյժն ի վաճառ հանելով, ուստի և զուր ալրուեսարներ են, դրանց թիւը հասնում է մօտ $4^1/_2$ միլիոնի. և վերջապէս 4) երկրագործ բանուորները և այնպիսի հողագործ-հողաւէրները, որոնց հողերն այնքան քիչ է և էժանագին, որ իրենց ապրուստը չէ ապահովում, ուստի և նրանք էլ ալրուեսարներ են հանդիսանում. դրանց թիւն էլ հասնում է 18 միլիոնի։

Այսպիսով ուրեմն մօտ 32 միլիոն ժողովուրդ կայ Ֆրանսիայում, որ երբէք կարողութիւն ունեցողների կարգը չէ կարող դասուել։ Հետևաբար Ֆրանսիայի ժողովուրդը ներկայումս բաղկացած է 32 միլիոն չքաւոր կամ ալրուեսար և 4 միլիոն կարողութեան տէր ժողովրդից։

Ո՞ր է ուրեմն Ֆրանսիայի առաջադիմութիւնը,—անկասկած կըհարցնի ամեն մի ընթերցող։

Մի կողմից Նէյմարկի հաւաքած և միւս կողմից միւս գիտնականների հրապարակած վիճակագրական տեղեկութիւնները կարծես հերքում են միմեանց։ Բայց լաւ քննելով կըտեսնենք, որ այդ քննադատութիւնը ոչ միայն ուղիղ չէ, այլ բոլորովին հակառակ գրութիւն է ստացւում՝—այդ թուերը լրացնում են միմեանց, դրանք ներկայիս տնտեսական-արդիւնագործական առաջադիմութեան ճշմարիտ պատկերն են ներկայացնում. այսինքն մի կողմից Նէյմարկի թուերն ապացուցանում են, որ մարդկային միտքը նորանոր յաղթութիւններ գործելով բնութեան վրայ, նրա ոյժերը ծառայեցնում է իր նպատակներին, հնարաւորութիւն է գտնում ամենադժուարին խնդիրներն ամենահեշտ կերպով լուծելու, բայց միւս կողմից ուրիշ գիտնականներ էլ ապացուցանում են, թէ այդ բոլորը կատարւում է աշագին նիւթական կարողութեան միջոցով և թէ միջակ հարստութիւնը կայուն դիրք ստանալու պայմանը չունի—նա կամ պրոլետարների կողմն է հակւում և կամ մեծ դրամագլխի. այդպիսով մի կողմից կազմւում է կապիտալ, միւս կողմից պրոլետարիատ, մի կողմից դրամական ոյժը կիզդրնանում է վտոքրաթիւ հարուստների ձեռքը, միւս կողմից աւելի ու աւելի ստուարանում է բազդազուրկների թիւը։

Բնականաբար երկրի այսպիսի դրութիւնը չէ կարող կանոնաւոր հանդիսանալ և յերթալ, հաւատարակիչները թիւնը պահպանելու հարկը զգացւում է այժմ ամեն տեղ էլ՝—Ֆրանսիական յեղափոխութեամբ երևան եկած և գոյութեան raison d'être ստացած «երրորդ» դասակարգն այժմ կարծես տատանւում է՝ իւր հերթին «չորրորդ» դասակարգին—բազդազուրկների դասակարգին տեղ տալու համար։

Մի վերջին նկատողութիւն էլ։

Վերջին տարիներս Ֆրանսիական խորհող դասակարգը ցաւ ի սիրտ նկատում է, որ Ֆրանսիայի ժողովուրդը քանի գնում պակասում է։ Ամեն կողմից քննութիւնները սկսուեցին և այդ տխուր երևոյթի իսկական պատճառները չկարողացան գտնել. ճշմարիտն այն էր, որ Ֆրանսիայի ծնողները որ բամադրութիւն չեն ցոյց տալիս զաւակ ունենալու։

Խնդիրը է, թէ մեր վերևում նկարագրած տնտեսական պայմաններում հնարաւոր է մի ժողովրդի բազմանալը։ Քանի գոյութեան պայմանները դժուարացել են, քանի նոր ծնուող սերունդը պատասխանատու է սովամահ լինելու, շատ բնական պիտի լինի, մեր կարծիքով, ծնողները՝ զաւակ չունենալու ցանկութիւնը։

Սակայն մի ուրիշ տեսակէտ կաշխատենք առանձնապէս խօսել այդ հետաքրքիր խնդրի մասին։

Մ. Մ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը, հեռագրում է, որ այլ ևս յանձնաժողով չէ ուղարկւում Հայաստան իրերի դրութիւնը քննելու համար։ Սեբաստեայի նահանգապետը պիտի շարունակէ մնալ իր պաշտօնի վրայ։

—Վիեննայից հեռագրում են, որ ունգարական մինիստրութեան անկումն անխուսափելի է համարւում։ Դրաֆ Սապարիի փոխանորդ համարում են ֆինանսների մինիստր Վեկերլէին։

—Հոկտեմբերի 3-ին (ն. ս.) մարզարէի ծննդեան օրը, Կ. Պոլսի ծովային նաւագործարանում մեծաժամանակ զինուորական հանդէս նոր նաւերի հիմք ձգուեց։

—«Berl. Pol. Nach.» լրագիրն ասում է, որ Գերմանիայի զինուորական նոր օրինագիծը կազմուած է պետական կանոյների, զինուորական մինիստրի, ընդհանուր շտաբի կաւագլուխի, ֆինանսների մինիստրի և պետական գանձարանի վարչութեան համաձայնութեամբ։

—Ինչպէս յայտնի է, բուլղարական ֆինանսների մինիստրը գնացել էր Վիեննա այնտեղի բանկիրներից մեկուսի փոխառութիւն անելու։ Այժմ հաղորդում են, որ այդ գործն անաջողութեան է հանդիպել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական լրագրները հաղորդում են, որ Եապոնիայի կայսրը վճռել է եկող ամառն ուղևորուել դէպի Եւրոպա։ Կարծում են, որ մայիսին կըլինի Անգլիայում։

—

Գերմանական կայսրը, մօտերքս ազգին-զաւակ ունենալու պատճառով, նեղութեան է հնարկել 400 բանտարկեալ կանանց։

—

Կուենչօ քաղաքի մաքսային հսկողներից մէնի հետ մի անծանոթ և ինքնուրոյն դէպք պատահեցաւ. հսկողն իւր ծառայութեան գերը կատարում էր գերեզմանատնից փոքր ինչ հեռու։ Իսկ հերթական ընկերը, որ պիտիրը գալիս էր նրա տեղը բռնելու, մօտացաւ նրան և ձեռքերը նրա ուսերի վրայ դնելով ասաց. «այժմ կէս գիշեր է»։ Մաքսային հսկողը կարծելով, որ իւր հետ խօսողը գերեզմանից դուրս եկած մեռել է, ըստ էութեան զրկւում է խօսելու ընդունակութիւնից։ Համբը չետոյ գրաւոր կերպով բացատրեց, թէ ինչպէս պատահեց իրեն այս տարօրինակ արկածը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 հոկտեմբեր։—*Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան ենթակայութեան խորհրդի անդամ Սալովը ենթակայութեան խորհրդի նախագահ է նշանակուած. մինիստրների ժողովի կանոնելիարիայի բաժնի տեսուչ Երմոլովը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կանոնելիարիայի վերատեսուչ է նշանակուած։*

ՊԱՐԻԶ.—*Կարմրոյի գործադուլ անողների մասնաժողովն որոշել է՝ չընդունել մինիստր-նախագահ Լուբէի վճիռը և շարունակել գործադուլը։ Այդ որոշումը պատճառաբանուած է հետևեալ դիտումներով. 1) Լուբէի միջնորդական վճիռը, ճանաչելով, որ Կայլհենեակի՝ աշխատանքներից հեռացնուիլը խանգարումն է ընդհանուր ճանապարհութեան, թոյլ չէ տալիս նրան մինչև անգամ ժամանակաւորապէս ազատացնողներում քանելու. 2) բոլոր ածխահանքափորները մասնակից են օգոստոսի 3—15-ի գործադուլներին, որոնց պատճառով նրանցից տասը հոգի միայն, որոնք նորից չեն ընդունուած աշխատանքների, գտնուում են երեկոյեան կայացած ածխահանքափորների ժողովում։ Մասնաժողովի այս որոշումը հաստատուած է։ Լրագիրները առհասարակ հաւանութիւն են տալիս Լուբէի մինչնորդական վճռին և ասում են, որ գործն այժմ վճռուած է և Կարմրոյի ինչպէս ածխահանքատէրերի ընկերութիւնը, նոյնպէս և գործադուլ անողները պարտաւոր են հնազանդուել այդ վճռին։ Արմատական և սոցիալական լրագիրները չեն ծածկում իրենց գժգոհութիւնը, բայց չեն համարձակւում խորհրդ տալ գործադուլը շարունակելու։ «Justice»-ը դիմում է բանուորներին խնդրելով խոհեմութեան օրինակ տալ, իսկ «La terne»-ն խորհուրդ է տալիս նրանց աշխատանքները նորոգելու։ Օրէնսգէտների կարծիքով, Լուբէի վճիռն իրաւաբանական տեսակէտից ոչ մի նշանակութիւն չունի, որովհետև Լուբէն չէ հոգացել նախօրօք երկու կողմից էլ ստորագրութիւն առնել, որ իւր վճռին հնազանդուեն։*

Խմբագիր—հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

!!ԶԳՈՒՇԱՑԵՔ ԿԵՂՏՈՒՄՆԵՐԻՑ!!

Ա ն ա ր չ ա պ ա հ ա կ ա ն

ՈՍԿԵՐՈՐԱԿԻ-ՏՈՒՐԻՆԻ ՕՁԱՍ

Գ ե ղ ա գ ո ր ծ

Գ. Ֆ. ԻՐԳԵՆՍԻ

աչքացնում է մազերը, արևից պրուակները, գեղձն բծերը, ելունդները բշակները և ազդում է աւելորդ քրտնելու դէմ։ Առաջարկւում է որպէս աշխուժացրէք անուշահոտ բարձր օրակարգեան օճառ։

Կարի գինը 50 կ., $^1/_2$ կարինը 30 կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏՆ բոլոր Ռուսական հասարակ համար Կ. Ի. ՖԵՐՐԵՅՆԻ մօտ Մոսկուայում։ ԴԵՊՈՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ դեղատնային ապրանքների առևտրի ընկերութեան Մուրինովի, պ. պ. Պապովի և Սպմոլովի դեղատներում։

(M.) 12—4.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԻՐ ՏԵՂԱԿԱԼԻ Հաճութեամբ Ս. Էջմիածնի Ա—սոմ—ոտրանական Վարչական Յանչնաժողովի կոմիտէ քննիչ նշանակուած լինելով Վրաստանի և Իմերէթիի թեմի ծխական դպրոցների, պատիւ ունիմ խնդրել բոլոր այն անձանց, որոնք դպրոցական որ և է գործով կամենում են տեսակցել ինձ հետ, թող բարեհաճեն գիմել տեղւոյս առաջնորդարանը մինչև ամսոյս 17-ը, երեկոյեան 4—7 ժամը, իսկ գրաւոր հաղորդակցութիւնները գաւառներից մինչև նոյեմբերի 1-ը կարող են ուղարկել հետևեալ հասցէով՝—

Тифлисъ (Епархіальный домъ) Члену Эчміадзинскаго училищнаго комитета.

Іеромонаху Леону.

(361) 2—2

ՅԵՆՉ *ձեռք բերել ցանկացող հայ ուսուցիչներին ամենամատչելի գներով պատրաստում է ուսուցչական ինստիտուտը նաև արտաքոյ մի փորձուած ուսուցիչ։ Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատունն։*

10—5

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՈ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ

Մոսկուայում Աբոնանի Լոպոտնի և Աբոնանդակոյան ընկերութեան,

ՌՈՃԱԼՆԵՐ ԵՒ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



Պետերբուրգի գործարանների՝

Կ. Մ. ՇՐԵԴԵՐԻ—արքունի գործարան, ԵՂՐ. ԳԻՒԵՐԻԻԻ և ՍՄԻԹՑ ՎԵԳԵՆԵՐԻ։

Ինչպէս յիշեալ գործարանների միակ գործակալ Կովկասում, Թիֆլիսում, ես իմ երաժշտական պեպոյում ունիմ մեծ քանակութեամբ դաշնակներ և պաշնամուրներ։

Ջութակներ, ալտներ, վիոլոնչելներ, հռնդոյքաներ, հիթառաներ, քնէյտոներ, հարմոնիումներ, լիրեր, ռոյեր և երաժշտական գործիքների բոլոր պարագաները առաջարկում եմ մեծ քանակութեամբ։ Գները գործարանային։ Վաճառում եմ հաւատով և մեծ քանակով։ Գները կարելի է վճարել մաս առ մաս։ Օտարերկրացիների պահանջները կատարում են անմիջապէս։ Գնած իրերն ընդունում են ուղարկելու տրանսպորտային ընկերութիւնների տակագնով։

Հասցէն՝ Дворцовая ул. д. Тиф. Двор. Зем. Банка, музыкальное депо Б. Мириманяна

(317) 25—11

ՁՈՒԻ ՍԱՊՈՆ

ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО. ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.

Հ. ՄԻՈՒԵՐՉԿ

(M.) 52—10

ԾԱՆՈՒՑՈՒՄ

,,ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Խնդրում է իւր ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ և ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

նոյնպէս և այն անձերին, որոնք «Նոր-Դար» ի հրատարակութեան օրից շաբաթաթէ, կամ երբ և իցէ, գործակից են թերթին՝ յօդուածներ թղթակցութիւններ կամ թարգմանութիւններ ուղարկելով, բարեհաճեն խմբագրութեանս ուղարկել իրենց ԼՈՒՐԱՆԿԱՐԸ (ձեղքը), պատկերների եռանը նշանակելով՝

ա. իրենց անուն-ազգանունը, բնակութեան տեղը, տարիքը, պարապմունքը.

բ. թէ որ ժամանակից են սկսել աշխատակցել և մինչև երբ։

Дозволено цензурою. Тифлисъ 16-го Октября 1892 г. Տպարան «Կաւկազ» լրագրի Типографія, «Кавказъ» Гол. пр. домъ Читахова.